ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Խ.Գրիգորյան

« 13 » 01 2023 թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Սուրեն Ռաֆիկի Լևոնյանի՝ «ՀՀ դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունության տնտեսամաթեմատիկական վերլուծությունը» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Ինժեներական տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2023 թվականի հունվարի 11-ի նիստում (արձանագրություն թիվ 6):

Նիստին մասնակցում էին՝ տնտ.գ.թ. դոցենտներ Ա.Ս. Թադևոսյանը, Լ.Վ. Չարխիֆալակյանը, Ե. Վ. Պետրոսյանը, Գ. Ա. Շուշանյանը, Ս. Ա. Մկրտչյանը, Վ. Բ Օդաբաշյանը, Հ. Խ. Խաչատրյանը, Հ. Հ. Գրիգորյանը, Կ. Ս. Նիկոլյանը, Կ. Վ. Տուրյանը, Ռ. Ն. Գևորգյանը Կ. Գ. Մկրտչյանը, Լ. Լ. Աղաջանյանը, Տ. Հ. Նասոյանը, Գ. Ն. Արևշատյանը, Գ.Ա.Շուշանյանը, Ջ.Ա.Թադևոսյանը, Դ.Ա.Անդրոյանը, Ս.Ֆ.Մանուկյանը, Գ.Ս.Գրիգորյանը, Ն.Պ.Ադոնցը, Լ.Կ.Հարությունյանը, Օ.Ա.Գալստյանը, Կ.Մ.Խաչատրյանը, Ա.Խ.Խաչատրյանը ասիստենտներ Ա. Մ. Մովսեսյանը, Ա. Ա. Աբրահամյանը, Ա. Ս Աքելյանը, դասախոսներ Գ. Ա. Խաչատրյանը, Հ. Վ. Գզրարյանը, Մ. Ռ. Չարխիֆալակյանը, Մ. Կ. Ղազարյանը, Խ. Ա. Շահբազյանը, Գ.Ս.Այվազյանը, Լ.Ա.Ալավերդյանը, Հ.Մ.Սաֆարյանը, Ն.Հ.Խալաթյանը, Ա.Ռ.Ավետիսյանը, Գ.Ա.Հարությունյանը, Ն.Գ.Սահակյանը, Հ.Ս.Թադևոսյանը, Ի.Է.Ավանիսյանը և Մ. Գ. Տավարացյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ աշխարհի շատ երկրներում դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը գների կայունությունն է, իսկ ռազմավարությունը՝ գնաճի նպատակադրումը: Գնաճը թիրախային մակարդակում պահելու համար Կենտրոնական բանկը կառավարում է համախառն պահանջարկը և գնաճային սպասումները՝ օգտագործելով քաղաքականության հիմնական՝ կարճաժամկետ տոկոսադրույքը և այլ գործիքներ, որոնց ազդեցությունը փոխանցումային մեխանիզմի տարբեր լծակների օգնությամբ կարող է փոխանցվել գնաճին:

Ժամանակակից տնտեսության պայմաններում երկրի մակրոտնտեսական կայունության համար կարևորվում է ինչպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների զգայունությունը Կենտրոնական բանկի կարգավորող ցուցանիշների փոփոխության նկատմամբ, այնպես էլ տնտեսության թիրախային ցուցանիշների զգայունությունն արտաքին և ներքին ցնցումների նկատմամբ: Ներկայումս պարբերաբար առաջանում են նոր մարտահրավերներ, որոնց ազդեցությունների գնահատումը և համապատասխան գործիքակազմի կիրառմամբ տնտեսության կարգավորումը կայուն զարգացման համար ունի առանցքային նշանակություն: Այս առումով խիստ կարևորվում է դրամավարկային քաղաքականության կարգավորող և ուղղորդիչ դերը, որի արդյունավետության բարձրացումը կարող է նպաստել երկրում գների կայունությանը, նպաստել տնտեսական աճին և զբաղվածության բարձր մակարդակին: Իսկ դրամավարկային արդյունավետ քաղաքականություն ունենալու համար կարևորվում է հիմնական դրամավարկային և այլ մակրոտնտեսական ցուցանիշների փոխազդեցության գնահատումը էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և հիմնական խնդիրները

Ատենախոսության նպատակն է գնահատել ՀՀ դրամավարկային քաղաքակա-նության ցուցանիշների զգայունությունը ներքին և արտաքին գործոնների ցնցումների նկատմամբ, վերհանել գնաճի տատանողականության պատճառները և հետևանքները:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

▪ Ուսումնասիրել դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմների էությունը, ներկայացնել զարգացող և զարգացած երկրներում փոխանցումային մեխանիզմի լծակների գործունեության տարբերությունները,

▪ նշել դրամավարկային քաղաքականության ռազմավարությունների առավելություններն ու թերությունները, Կենտրոնական բանկի գործիքակազմի կիրառման անհրաժեշտությունները և հետևանքները,

▪ նկարագրել դրամավարկային քաղաքականության էմպիրիկ գնահատման միջազգային փորձը և դրանց հիման վրա ՀՀ տնտեսության համար կառուցել ու գնահատել տնտեսամաթեմատիկական մոդելներ,

▪ գնահատել ՀՀ-ում փողի պահանջարկի զգայունությունը դրամական տարբեր ագրեգատների դեպքում, բացահայտել ավանդների զգայունությունը տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ,

▪ գնահատել դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի լծակների արդյունավետությունը, բացահայտել այն լծակները, որոնք գործում են ՀՀ-ում: Ներկայացնել դրամավարկային քաղաքականության կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները տնտեսության իրական հատվածի վրա,

▪ էմպիրիկ վերլուծությունների հիման վրա որոշել ՀՀ-ում ՀՆԱ ճեղքի և գնաճի միջև կապի բնույթը, գնահատել գնաճի տատանողականության ազդեցությունը տնտեսական աճի վրա, պարզել գնաճի տատանողականության հիմքում ընկած գործոնները,

▪ Բացահայտել գլոբալ մակրոտնտեսական ցնցումների ազդեցությունը ՀՀ հիմնական դրամավարկային ցուցանիշների զգայունության վրա, պարզաբանել այդ ցնցումների՝ ՀՀ տնտեսության վրա փոխանցման ուղիները:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսի կողմից ներկայացված հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում.

1. ՀՀ-ում փողի պահանջարկի զգայունության գնահատման համար ձևավորվել է ավտոռեգրեսիվ բաշխված լագով (ARDL) մոդել: Գնահատվել է փողի պահանջարկի զգայունությունը ՀՆԱ-ից, գնաճից և ռեպո տոկոսադրույքից, ինչպես նաև ավանդների պահանջարկի զգայունությունը՝ արտարժույթով և դրամով ավանդների տոկոսադրույքներից:

2. Բացահայտվել է, որ M2 դրամական ագրեգատի վրա նշանակալի ազդեցություն ունի ՀՆԱ-ն, M1-ի վրա՝ և՛ ՀՆԱ-ն, և՛ գնաճը, և՛ տոկոսադրույքը, իսկ դրամային ավանդների ծավալի վրա նշանակալի և առավել մեծ ազդեցություն ունի արտարժութային ավանդների տոկոսադրույքը:

3. Կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիվ մոդելի միջոցով գնահատվել է դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի արդյունավետությունը ՀՀ-ում: Հիմնավորվել է, որ ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության շոկը առնվազն 3 փոխանցումային լծակների միջոցով ազդում է տնտեսության իրական հատվածի վրա:

4. Գնաճի տատանողականության ազդեցությունը երկրի տնտեսական աճի վրա ներկայացնող մոդելի գնահատման արդյունքները հաստատում են, որ գնաճի և ՀՆԱ տատանողականության միջև գոյություն ունի երկարաժամկետ կապ, և դիտարկված գնաճի ցածր տատանողականություն ունեցող երկրներում տնտեսական աճը կայուն է:

5. Վեկտոր ավտոռեգրեսիվ մոդելի (VAR) միջոցով բացահայտվել է ՀՀ-ում գնաճի, ՀՆԱ ճեղքի և փոխարժեքի տատանողականության վրա ազդող հիմնական արտաքին գործոնները: Բացահայտվել է, որ ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները խիստ զգայուն են արտաքին ցնցումների նկատմամբ: Ձևավորվել են ՀՀ տնտեսության վրա վերոնշյալ ցնցումների ազդեցության փոխանցման հնարավոր մեխանիզմները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, առարկան և օբյեկտը, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են գիտական նորույթները, արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Դրամավարկային քաղաքականության ցուցանիշների փոխկապվածությունները**» գլխում մեկնաբանվել են դրամավարկային քաղաքականության ցուցանիշների փոխկապվածությունների մասին տարբեր տնտեսագիտական դպրոցների հիմնական դրույթները համեմատական վերլուծության միջոցով: Քննարկվել է փողի զանգվածի, գնաճի, փոխարժեքի նպատակադրման ռազմավարությունները, դրանց կիրառման առավելություններն ու թերությունները, գնաճի կառավարման միջանկյալ ու վերջնական նպատակները և կիրառվող գործիքակազմը: Նկարագրվել են փոխանցումային մեխանիզմի այն լծակները, որոնց միջոցով ԿԲ-ն կարող է կարգավորել գնաճի մակարդակը: Առաջին գլուխը եզրափակվել է դրամավարկային քաղաքականության ցուցանիշների վարքագծի վերլուծությամբ:

Ատենախոսության երկրորդ՝ «**Դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունության գնահատման մեթոդաբանական հիմքը**» գլխում հեղինակը ներկայացրել է դրամավարկային քաղաքականության տնտեսամաթեմատիկական վերլուծության միջազգային փորձի ամփոփումը: Այս գլխում հեղինակը ներկայացրել է նաև դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատման ժամանակակից VAR (վեկտոր ավտոռեգրեսիվ), SVAR (կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիվ), ARDL (ավտոռեգրեսիվ բաշխված լագով) մոդելների նկարագրությունը և մեթոդաբանական ակնարկը:

Ատենախոսության երրորդ՝ «**Դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունության գնահատումը ՀՀ-ում**» գլխում կատարվել է ՀՀ-ում փողի պահանջարկի զգայունության գնահատում դրամական տարբեր ագրեգատների դեպքում՝ ավտոռեգրեսիվ բաշխված լագով մոդելի միջոցով: Վերլուծվել և գնահատվել են դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի լծակները, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության երկարաժամկետ ազդեցությունները: Գնահատվել են գնաճի և ՀՆԱ ճեղքի տատանողականության երկարաժամկետ կապը, ՀՀ դրամավարկային քաղաքականության ցուցանիշների վրա արտաքին գործոնների ցնցումների ազդեցությունները և ներկայացվել է այդ ցնցումների փոխանցման ուղիները:

Ատենախոսության «**Եզրակացություններ**» բաժնում հեղինակը հակիրճ ներկայացրել է կատարված վերլուծությունների արդյունքում ստացված հիմնական եզրահանգումները և առաջարկները:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը

Ատենախոսության շրջանակներում դրամավարկային հիմնական ցուցանիշների և մակրոտնտեսական այլ ցուցանիշների փոխազդեցության գնահատումները կարող են նպաստել դրամավարկային քաղաքականության բազմակողմանի ազդեցությունների առավել խորը ընկալմանը: Հետազոտության արդյունքում ստացված եզրակացությունները կարող են օգտակար լինել ՀՀ Կենտրոնական բանկին՝ դրամավարկային քաղաքակա-նությունը մշակելու ընթացքում, տնտեսագետներին և դրամավարկային քաղաքականու-թյան վերլուծմամբ զբաղվող այլ հետազոտողներին:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Մեթոդաբանական մասը կազմում է աշխատանքի գերակշիռ մասը՝ 2 գլուխներ, որտեղ ուսումնասիրված տեսական դրույթների և մոտեցումների նվազ մասն է դարձել գլուխ 3-ում հետազոտության կոնկրետ նպատակով տնտեսամաթեմատիկական մոդելների կառուցման, գնահատման և արդյունքների վերլուծության մեթոդաբանություն:
2. ՀՀ դրամավարկային ցուցանիշների զգայունության կատարված գնահատման արդյունքները չեն կոնկրետացվել առաջարկությունների ձևով՝ ՀՀ ԿԲ-ի դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով:
3. Բովանդակության մեջ Եզրակացությունների մասի էջի համարակալումը (նշված է՝ էջ 97) չի համընկնում ատենախոսության մեջ փաստացի համարակալմանը (փաստացի՝ էջ 109):

Եզրակացություն

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժեքները ու ստացված արդյունքները: Դիտարկված ատենախոսության առավելությունն է ընտրված և կառուցված տնտեսամաթեմատիկական մոդելների, ծրագրային գործիքակազմի ադեկվատությունը դիտարկվող հիմնախնդրին:

Սուրեն Ռաֆիկի Լևոնյանի թեկնածուական ատենախոսությունը ունի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են կարևոր ու արդիական խնդիրներ: Հեղինակը

հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Ատենախոսության շրջանակներում դրամավարկային քաղաքականության ցուցանիշ-ների և մակրոտնտեսական այլ ցուցանիշների փոխազդեցության գնահատումները կարող են նպաստել դրամավարկային քաղաքականության բազմակողմանի ազդեցությունների առավել խորը ընկալմանը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի հիմնական արդյունքները, որոնք հրատարակված են հեղինակի 6 գիտական հոդվածներում:

Ընդհանուր առմամբ, Ս. Ռ. Լևոնյանի «ՀՀ դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունության տնտեսամաթեմատիկական վերլուծությունը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ինժեներական տնտեսագիտության
և կառավարման ֆակուլտետի դեկանի ժ/պ
տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ Ա.Ս.Թադևոսյան

Գրախոսներ՝
տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ Ս. Ա. Մկրտչյան

տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ Ե. Վ. Պետրոսյան

Ա.Ս.Թադևոսյանի, Ս. Ա. Մկրտչյանի և Ե. Վ. Պետրոսյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀԱՊՀ գիտական քարտուղար,
տեխ.գիտ.թեկնածու Ծ.Ս. Հովհաննիսյան

13.01.23թ.